ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշման հավելվածի 4-րդ և 22-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի մարտի 25-ի N 67-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի 2019 թվականի մայիսի 23-ի N Ն/457-2019 զեկուցագիրը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքոհիշյալ աշխատողներին 2019 թվականի հունիսի 10-ից մինչև հունիսի 26-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում, տասը օրով, գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հետևյալ համայնքներ՝ գյուղ Նոր Երզնկա՝ հունիսի 10-ից 14-ը *(հինգ օր)* և գյուղ Արգել՝ հունիսի 20-ից 26-ը *(հինգ օր)՝ 2019 թվականի իրավական և մասնագիտական հսկողություն* իրականացնելու համար՝

1) ***Ռոպրամ Մկրտչյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական *(հինգ օր գյուղ Նոր Երզնկա և հինգ օր գյուղ Արգել)*,

2) ***Հարություն Ալեքսանյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ *(հինգ օր գյուղ Նոր Երզնկա և հինգ օր գյուղ Արգել)*:

2. ***Հարություն Ալեքսանյանի*** գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ ***Արմեն Հակոբյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և ճանապարհածախս)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Սույն կարգադրության 1-ին կետով գործուղված քաղաքացիական ծառայողներին գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացնել գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2019 թվականի հունիսի 07
ք. Հրազդան
N 83-Ա